



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 96

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28 -Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2020թ. հոկտեմբերի 28-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Մ.Ասլանյան

2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 167-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ. Վ.Գրիգորյան

6. Վանաձոր համայնքի 2021թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակները և դրույքաչափերը սահմանելու մասին

զեկ. Վ.Դավիթավյան

7. ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու և Վանաձոր համայնքի ավագանու 28 նոյեմբերի 2019 թվականի թիվ 153-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ Վ.Դավիթավյան

8. Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 22 հասցեում գտնվող, Սիլվա Շավարշի Մայիլյանի հետ կնքված մասնաշենքի վարձակալության պայմանագրի ժամկետը երկարաձգելու մասին

զեկ Վ.Դավիթավյան

9. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի հաշվեկշռում առկա գույքի դուրսգրումը թույլատրելու մասին

զեկ. Ա.Օհանյան

10. Վանաձորի համայնքապետարանի վարչական շենքի ջեռուցումը կազմակերպելու համար ժամանակավորապես հաստիքներ նախատեսելուն համաձայնություն տալու և աշխատակիցների աշխատավարձի չափեր սահմանելու մասին

զեկ. Ա. Օհանյան

11. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 146 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Գ. Բաղյան

12. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 148 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

զեկ. Կ. Պառավյան

13. Վանաձոր համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին

զեկ. Ս. Աբովյան

14. Վանաձորի համայնքի ավագանու 24 հուլիսի 2009 թվականի թիվ 61 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

զեկ. Ս. Աբովյան

15. Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ. Մ. Ասլանյան

ԿՈՂՄ (17)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

Ա. Սարգսյան

Ա. Փելեշյան

Ա. Ափինյան

Կ. Դավթյան

Դ. Սիմոնյան

Ա. Խաչատրյան

Ս. Մելքոնյան

Հ. Խլոպուզյան

Ս. Ղամբարյան

Տ. Նազարյան

Մ. Ապերյան

Ք. Մարության

Ա. Լոքյան

Կ. Ղուկասյան

Ա. Ավետյան

Հ. Սիմիկյան

Ա. Կարապետյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ

ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2020 թ. հոկտեմբեր 28
ք. Վանաձոր





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 97-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի ԹԻՎ 167-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 167-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում (հատված 2 և հատված 3) կատարել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամի փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (17)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

Ա.Սարգսյան	Ա.Փելեշյան
Ա.Ափինյան	Կ.Դավթյան
Դ.Սիմոնյան	Ա.Խաչատրյան
Ս.Մելքոնյան	Հ.Խյուսովյան
Ս.Ղամբարյան	Տ.Նազարյան
Մ.Ապերյան	Ք. Մարության
Ա.Լոքյան	Կ. Ղուկասյան
Ա. Ավետյան	Հ.Սիմիկյան
Ա.Կարապետյան	

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ
ՏԵՂԱԿԱՆ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2020 թ. հոկտեմբեր 28
Ք. Վանաձոր



Հավելված

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու

«28» հոկտեմբերի 2020թ.

թիվ 97-Ն որոշման

**ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Վարչական բյուջե	հազար դրամ	
									այդ թվում ըստ հոդվածների	
									4819	4891
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (գող 2100+գող3100)	0,0	3000,0	-3000,0	0,0	3000,0	-3000,0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3000,0	3000,0		3000,0	3000,0	
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	3000,0	3000,0		3000,0	3000,0	
				Աջակցություն համապիրություններին	3000,0	3000,0		3000,0	3000,0	
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	-3000,0		-3000,0	-3000,0		-3000,0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-3000,0		-3000,0	-3000,0		-3000,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 98-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի ԹԻՎ 167-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 167-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում (հատված 2 և հատված 3) կատարել 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամի փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (15)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (2)

Ա.Սարգսյան

Ա.Փելեյան

Ք. Մարության

Ա.Ափինյան

Կ.Դավթյան

Ա.Կարապետյան

Դ.Սիմոնյան

Ա.Խաչատրյան

Ս.Մելքոնյան

Հ.Խլոպուզյան

Ս.Ղամբարյան

Տ.Նազարյան

Մ.Ապերյան

Կ. Ղուկասյան

Ա.Լոքյան

Հ.Սիմիկյան

Ա. Ավետյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



Հավելված

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու

«28» հոկտեմբերի 2020թ.

թիվ 98-Ն որոշման

ՀՀ ԼՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

հազար դրամ

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Վարչական բյուջե	այդ թվում ըստ հոդվածների	
									4213	4891
									Կոմունալ ծառայություններ	Պահուստային միջոցներ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2500+տող3100)	0,0	3000,0	-3000,0	0,0	3000,0	-3000,0
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	3000,0	3000,0		3000,0	3000,0	
2511	05	1	1	Աղբահանում	3000,0	3000,0		3000,0	3000,0	
				Կենցաղային աղբահանություն	3000,0	3000,0		3000,0	3000,0	
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	-3000,0		-3000,0	-3000,0		-3000,0
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	-3000,0		-3000,0	-3000,0		-3000,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 99-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի ԹԻՎ 167-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 167-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում (հատված 2 և հատված 3) կատարել 430 000 (չորս հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամի փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (17)


ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

Ա. Սարգսյան  Ա. Փելեշյան 

Ա. Ափինյան  Կ. Դավթյան 

Դ. Սիմոնյան  Ա. Խաչատրյան 

Ս. Մելքոնյան  Հ. Խլոպուզյան 

Ս. Ղամբարյան  Տ. Նազարյան 

Մ. Ապերյան  Ք. Մարուքյան 

Ա. Լոքյան  Կ. Ղուկասյան 

Ա. Ավետյան  Հ. Սիմիկյան 

Ա. Կարապետյան 

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԱՊՈՍՏՈՍ

ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



Հավելված

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ավագանու

«28» *հոկտեմբեր* 2020թ.

թիվ *99* Ն որոշման

**ՀՀ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Տողի NN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	Ավելացում	Պակասեցում	Ֆոնդային բյուջե	հազար դրամ այդ թվում ըստ հոդվածների
									5113
									Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում
1	2	3	4	5	6	7	8	9	10
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2400+տող2600)	0,0	430,0	-430,0	0,0	0,0
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	430,0	430,0		430,0	430,0
2451	04	5	1	ճանապարհային տրանսպորտ	430,0	430,0		430,0	430,0
				Հենապարերի վերականգնում	430,0	430,0		430,0	430,0
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	-430,0		-430,0	-430,0	-430,0
2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	-430,0		-430,0	-430,0	-430,0
				Բազմաբնակարան շենքերի ֆասադային պարերի և պարզգամբների կապիտալ նորոգում			-430,0	-430,0	-430,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 100-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23 -Ի ԹԻՎ 167-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի առաջարկը՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Վանաձոր համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 167-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 1) Բյուջեի եկամտային մասում (հատված 1) կատարել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի փոփոխություն՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
 - 2) Բյուջեի ծախսային մասում (հատված 2 և հատված 3) կատարել 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի փոփոխություն՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԿՈՂՄ (17)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

Ա. Սարգսյան

Ա. Փելեշյան

Ա. Ափինյան

Կ. Դավթյան

Դ. Սիմոնյան

Ա. Խաչատրյան

Ս. Մելքոնյան

Հ. Խլոպուզյան

Ս. Ղամբարյան

Տ. Նազարյան

Մ. Ապերյան

Ք. Մարության

Ա. Լոքյան

Կ. Ղուկասյան

Ա. Ավետյան

Հ. Սիմիկյան

Ա. Կարապետյան

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆԻ ԱՐԿԱԴԴ

ՏԵՂԱԿԱԼ

ԱՐԿԱԴԴ ՓԵԼԵՇՅԱՆ



Հավելված թիվ 1

Վանաձոր համայնքի ավագանու

«28» հոկտեմբեր 2020թ.

թիվ 100-Ն որոշման

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդ- վածի NN	հազար դրամ		
			Ընդամենը	Ավելացում	Վարչական բյուջե
1	2	3	4	5	6
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1200)		5000,0	5000,0	5000,0
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1250)	7300	5000,0	5000,0	5000,0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1254)	7331	5000,0	5000,0	5000,0
1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ, որից		5000,0	5000,0	5000,0
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		5000,0	5000,0	5000,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված թիվ 2

Վանաձոր համայնքի ավագանու

«ՁԵ» հոկտեմբեր 2020թ.

թիվ 100-Ն որոշման

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տողի NIN	Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը	Ավելացում	Վարչական բյուջե	հազար դրամ
								հոդված
								4269
1	2	3	4	5	6	7	8	Հատուկ նպատակային այլ նյութեր 9
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2111)	5000,0	5000,0	5000,0	5000,0
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	5000,0	5000,0	5000,0	5000,0
				<i>Աշխատակազմի պահպանման ծախսեր</i>	5000,0	5000,0	5000,0	5000,0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, lori.vanadzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020 թվականի N 101-Ն

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 8,9,10,11,12,13 և 14 հոդվածներով՝ Վանաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Վանաձոր համայնքում 2021թվականի համար սահմանել՝

ա/ տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի,
բ/ տեղական վճարների տեսակները և դրույքաչափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

ԿՈՂՄ (16)

ԴԵՄ (0)

ՁԵՌՆՊԱՀ (0)

Ա.Սարգսյան

Ա.Փելեշյան

Ա.Ափինյան

Կ.Դավթյան

Դ.Սիմոնյան

Ա.Խաչատրյան

Ս.Մելքոնյան

Հ.Խլոպուզյան

Ս.Ղամբարյան

Տ.Նազարյան

Մ.Ապերյան

Ք. Մարության

Ա.Լոբյան

Կ. Ղուկասյան

Ա. Ավետյան

Հ.Սիմիկյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ

ՏԵՂԱԿԱՆ

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ





Հավելված թիվ 2

Վանաձոր համայնքի ավագանու

« 28 » *հոկտեմբեր* 2020թ.

թիվ 101-Ձ որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

2/2	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԸ
1.	Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5.0 հազար դրամ
2.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	5.0 հազար դրամ
3.	Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	5.0 հազար դրամ
4.	Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	25.0 հազար դրամ
5.	Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.	25.0 հազար դրամ
6.	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ աղբահանության վճար	յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 0.2 հազար դրամ վարձավճար
7.	Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքագրման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույլտվության վճար	1խորանարդ մետրի համար՝ 2.46 հազար դրամ վարձավճար
8.	Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ վճար՝	
ա)	„ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԸԻՏՅՈՒՆ ՆԱԿԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ“, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ

	բ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	4.0 հազար դրամ
	գ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	4.0 հազար դրամ
	դ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ե)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	4.0 հազար դրամ
	զ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 8 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	4.0 հազար դրամ
	է)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 10 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ը)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 11 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	թ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 15 ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ժ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԱՏԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 19 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ի)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 24 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	լ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 28 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	խ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 30 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ծ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 31 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	կ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 32 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	հ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 33 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ձ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 34 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ղ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 35 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	ճ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 40 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
	մ)	„ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 41 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀՈԱԿ	5.0 հազար դրամ
9.	Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար վճար՝		
9.1	„ՎԱՆԱՁՈՐԻ ԷԴՈՒԱՐԴ ԿԶԱՐԹՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՄԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ,, ՀՈԱԿ		
	ա)	Դաշնամուր	2.0 հազար դրամ
	բ)	Վոկալ	1.5 հազար դրամ

	գ)	Այլ նվազարաններ	1.5 հազար դրամ
9.2	„ՎԱՆԱՁՈՐԻ ՇԱՐԱ ՏԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	Դաշնամուր	2.0 հազար դրամ
	բ)	Վոկալ	1.5 հազար դրամ
	գ)	Այլ նվազարաններ	1.5 հազար դրամ
9.3	„ՎԱՆԱՁՈՐԻ ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	Դաշնամուր	2.0 հազար դրամ
	բ)	Պար	2.0 հազար դրամ
	գ)	Այլ նվազարաններ	1.5 հազար դրամ
9.4	„ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԻԳՈՐ ՀԱԽԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	Դաշնամուր	2.0 հազար դրամ
	բ)	Վոկալ	1.5 հազար դրամ
	գ)	Այլ նվազարաններ	1.5 հազար դրամ
9.5	„ՎԱՆԱՁՈՐԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	Դաշնամուր	2.0 հազար դրամ
	բ)	Վոկալ	1.5 հազար դրամ
	գ)	Այլ նվազարաններ	1.5 հազար դրամ
9.6	„ՎԱՆԱՁՈՐԻ ՍՏԵՓԱՆ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	նկարչական /կերպարվեստ/	2.0 հազար դրամ
9.7	„ՎԱՆԱՁՈՐԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ԿՐԹԱԴԱՍԴԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ.. ՀՈԱԿ		
	ա)	Պար	1.5 հազար դրամ
9.8	„ՎԱՆԱՁՈՐԻ ԱՐԲԵՐՏ ԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ § ԿԵՆՏՐՈՆ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ.. ՀՈԱԿ		
	ա)	Սպորտային ակրոբատիկա	3.0 հազար դրամ
	բ)	Մարմնամարզություն	3.0 հազար դրամ

	գ)	Դահլիճի վարձակալություն սիրողական մարզումների համար	մեկ ժամը՝ 1.0 հազար դրամ
9.9	„ՎԱՆԱԶՈՐԻ ԼՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱՅՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՈՅ.. ՀՈԱԿ		
	ա)	Սկսնակ մարզիկներ՝ 5-8 տարեկան	4.0 հազար դրամ
	բ)	Ուսումնամարզային խմբի մարզիկներ՝ 9-15 տարեկան	5.0 հազար դրամ
	գ)	Սիրողական	Ամսական՝12ժամ 10.0 հազար դրամ մեկ ժամը՝ 1.5 հազար դրամ
10	Համայնքային ենթակայության մշակույթի տների և թանգարանների ծառայություններից օգտվողների համար վճար՝ յուրաքանչյուր ամսվա համար		
10.1	«ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 1 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ		
	ա)	Ժողովրդական և ժամանակակից պարերի, դաշնամուրի, ընդհանուր դիզայնի, աերոդիզայնի, օրիգամիի և թղթե աշխատանքների, հեյլունագործության և հուլունքագործության խմբակներ	3.0 հազար դրամ
	բ)	Սեղանի դիզայնի , կարվինգի և գոբելենի խմբակներ	5.0 հազար դրամ
	գ)	Նկարչության խմբակ	2,0 հազար դրամ
10.2	«ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ		
	ա)	Դիմի, պարի, դաշնամուրի խմբակներ	3.0 հազար դրամ
	բ)	Սինթեզի խմբակ	1.0 հազար դրամ
10.3	«ՎԱՆԱԶՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՄԱՆ ԶԱՔԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀՈԱԿ		
	ա)	Պարի, նկարչության, դիզայնի խմբակներ	3.0 հազար դրամ
	բ)	Ասմունքի խմբակ	2.0 հազար դրամ

	զ)	Դիոլի, ակորդեոնի խմբակներ	5.0 հազար դրամ
	դ)	«Մշակութային և ինտելեկտուալ զարգացման» խմբակ	11.0 հազար դրամ
10.4		«ՎԱՆԱԶՈՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԼՈՍ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ	
	ա)	Մուտքի տոմս	Մինչև 18 տարեկան 0.1 հազար դրամ 18 տարեկանից բարձր՝ 0.2 հազար դրամ օտարերկրյա զբոսաշրջիկներ՝ 0.5 հազար դրամ
	բ)	Էքսկուրսիոն ծառայություններ	ռուսերեն 1.5 հազար դրամ անգլերեն 1.5 հազար դրամ
10.5		«ՎԱՆԱԶՈՐԻ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ» ՀՈԱԿ	
	ա)	Մուտքի տոմս	Մինչև 18 տարեկան 0.1 հազար դրամ 18 տարեկանից բարձր՝ 0.2 հազար դրամ օտարերկրյա զբոսաշրջիկներ 0.5 հազար դրամ
	բ)	Էքսկուրսիոն ծառայություններ	ռուսերեն 1.5 հազար դրամ անգլերեն

			1.5 հազար դրամ
11.		Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝	1,0 հազար դրամ
12		Համայնքային սեփականություն հանդիսացող էքսկավատորի օգտագործման համար	1 ժամը 13.0հազար դրամ, 1օրը (8ժամ) 88.0հազար դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա.ՓԵԼԵՇՅԱՆ

ԵՎ ԳԿ և ԳՈՎԱԶԴԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ՝

Վ.ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

ՃՔ ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ՝

Ս. ԱԲՈՎՅԱՆ

ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՇԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Գ.ԲԱՂՅԱՆ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Գ.ՍԱՑԱԿՅԱՆ



Հավելված թիվ 1
Վանաձոր համայնքի ավագանու
«28» հոկտեմբերի 2020թ.
թիվ 101-Ը որոշման

2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

Հ/Հ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԴՐՈՒՅՔԱ ԶԱՓԵՐԸ
1)	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.	
ա.	հիմնական շենքերի և շինությունների համար՝	
	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15.0 հազար դրամ
բ.	սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝	
բա)	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30.0 հազար դրամ
բբ)	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50.0 հազար դրամ
բգ)	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	75.0 հազար դրամ
բդ)	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	150.0 հազար դրամ
գ.	ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝	
գա)	մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	3.0 հազար դրամ
գա)	20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	5.0 հազար դրամ
2)	Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով	
ա)	չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի զաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝	3.0 հազար դրամ

F)	բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն կիրառվում են նաև նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը, մասնավորապես՝	
F1)	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15.0 հազար դրամ
F2)	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30.0 հազար դրամ
F3)	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50.0 հազար դրամ
F4)	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	75.0 հազար դրամ
F5)	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100.0 հազար դրամ
Գ)	նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սահմանված նորմերը և դրույքաչափերը, մասնավորապես՝	
Գ1)	մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար	15.0 հազար դրամ
Գ2)	200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	30.0 հազար դրամ
Գ3)	500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	50.0 հազար դրամ
Գ4)	1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	75.0 հազար դրամ
Գ5)	3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝	100.0 հազար դրամ
3)	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝	5.0 հազար դրամ
4)	Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	200.0 հազար դրամ
5)	Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	60.0 հազար դրամ

6)	Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝	50.0 հազար դրամ
7)	Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝	
ա.	Ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	
աա)	մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	10.0 հազար դրամ
աբ)	26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	13.0 հազար դրամ
ազ)	50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝	18.0 հազար դրամ
